Լեռնաձոր

Բնակչություն՝ 344
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 21կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Պատմական աղբյուրներում Լեռնաձորը հիշատակվում է Քրդեկանց, Քյուրդիքյանդ, Դիլլաբ անուններով: Լեռնաձոր է վերանվանվել 1920-ականներին: Ըստ ավանդության բնակիչների նախնիների մի մասը ներգաղթել է Պարսկահայաստանի Ղարադաղի շրջանի գյուղերից: 1958թ. Ներկայիս գյուղը կառուցվել է 1958թ. նախկին գյուղից 2 կմ հարավ-արևելք, նախկին Դիլլար-Տիրնիկ գյուղատեղիում: Գյուղի տարածքում կա երկու եկեղեցի, որից սբ Աստվածածինը (18 դ.) կանգուն է, գյուղատեղիներ (Շլորուտ, Սարի Յուրդ, Դալուլար):
Լեռնաձորում են ծնվել պատմաբան-աշխարհագրագետ, պրոֆ. Թ.Հակոբյանը, գրող Ս.Ումառյանը:

Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 15808 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9184 հա, որից՝
- վարելահող՝ 66 հա, խոտհարք՝ 294 հա, արոտ՝ 3294 հա, այլ հողատեսք՝ 5530 հա
- բնակավայրերի հողեր՝ 208 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 139 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝42 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 498 հա,
- անտառային հողեր՝ 5578 հա, որից անտառածածկ՝4042 հա
- ջրային հողեր՝ 160 հա: